

**Ռուզաննա Մանգասարյան, տ.գ.թ.,  
ԱրՊՀ տնտեսագիտության տեսության և  
կառավարման ամբիոնի դոցենտ**  
**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՆԹԱՀԱՍՏԱԿԱՐԳԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Անկախության հռչակումից հետո ԱՀ իշխանությունների առջև ծառայան բազմաթիվ խնդիրներ, որոնց թվում էին կարիքավորների ու գործազուրկների պաշտպանությունը և հասարակության բոլոր խավերի շահերն ու նախասիրությունները հաշվի առնող ամբողջական սոցիալական քաղաքականության մշակումը: Հոդվածում մանրակրկիտ ուսումնասիրվում են Հանրապետությունում սոցիալական պաշտպանության համակարգի կայացման առումով մտահոգիչ խնդիրները: Հիմնավորվում է պետության կողմից սոցիալական ծառայությունների շուկայում մենաշնորհային դերից հրաժարվելու անհրաժեշտությունը՝ խրախուսելով սոցիալական պաշտպանության մյուս սուբյեկտների, հատկապես՝ մասնավոր, հասարակական հաստիքների, ինչպես նաև ՏԻՄ-երի մասնակցությունը:

Դիտարկվում են երկրում բարեգործական բնագավառի համակարգման և բարեգործության կարգավորման իրավական հիմքերը: Առաջարկվում են միջոցառումներ, որոնք կնպաստեն ԱՀ սոցիալական պաշտպանության գործող համակարգի ինստիտուցիոնալ ենթահամակարգերի միջև փոխազդեցության կայացմանը:

**Мангасарян Рузанна , к.э.н.,  
Доцент кафедры теории экономики и менеджмента АРГУ**  
**ВОЗМОЖНОСТИ УЛУЧШЕНИЯ ДЕЯТЕЛЬНОСТИ ПОДСИСТЕМ СИСТЕМЫ СОЦИАЛЬНОЙ  
ЗАЩИТЫ**

После провозглашения независимости власти Арцахской республики столкнулись со многими проблемами, в числе которых защита нуждающихся и безработных и выработка целостной социальной политики, учитывающей интересы и потребности всех слоев общества. В статье детально рассматриваются вопросы, вызывающие обеспокоенность в связи со становлением системы социальной защиты в республике. Обосновывается необходимость отказа государства от монопольной роли на рынке социальных услуг путем поощрения участия других субъектов социальной защиты, особенно частных, общественных и местных органов самоуправления.

Рассматривается правовая база систематизации и регулирования благотворительной деятельности в стране. Предлагаются меры по содействию взаимодействия между институциональными инфраструктурами действующей системы социальной защиты Арцахской Республики.

**Ключевые слова:** социальная защита, социальная услуга, социальное пособие, пенсия, система, подсистема, социальная помощь, благотворительность, частный сектор, государственный сектор.

**Ruzanna Mangasaryan. Ph.D.,  
Associate Professor of the Chair of Economic Theory and Management of ASU**  
**THE OPPORTUNITIES FOR IMPROVING THE PERFORMANCE OF SUBSYSTEMS OF THE SOCIAL  
PROTECTION SYSTEM**

After the proclamation of independence, the authorities of the Artsakh Republic faced many problems, including the protection of the needy and the unemployed and the development of an integral social policy that takes into account the interests and needs of all sectors of society.

The issues of concern dealing with the development of the social protection system in the republic are studied in the article. The necessity of the government refusal from the monopolistic role in the market

*of social services is substantiated by encouraging the participation of other subjects of social protection, especially private, public and local bodies of self-government.*

*The legal framework for the systematization and regulation of philanthropic activities in the country is considered. Measures are proposed to promote interaction between the institutional infrastructures of the current system of social protection of the Artsakh Republic.*

**Key words:** *social protection, social service, social allowance, pension, system, subsystem, social assistance, charity, private sector, public sector*

Անկախության հռչակումից հետո ինչպես ՀՀ, այնպես էլ ԱՀ իշխանությունների առջև ծառայանքի բազմաթիվ խնդիրներ, որոնց թվում էին կարիքավորների ու գործազուրկների պաշտպանությունը և հասարակության բոլոր խավերի շահերն ու նախասիրությունները հաշվի առնող ամբողջական սոցիալական քաղաքականության մշակումը:

Դա հայկական երկու պետությունների համար բավական բարդ խնդիր էր՝ սոցիալական քաղաքականության իրականացման մեխանիզմների և ավանդույթների բացակայության պատճառով: Անկախ պետականության բացակայության պայմաններում նորանկախ բոլոր պետությունների սոցիալական քաղաքականությունը համապատասխանում էր այն երկրի (ԽՍՀՄ) սկզբունքներին, որի կազմի մեջ էին նրանք գտնվում: Միաժամանակ, տարածաշրջանում գործում էին սոցիալական պաշտպանության սեփական մեխանիզմներ, որոնք հիմնված էին ազգային սովորույթների վրա:

Խորհրդային պետության սոցիալական քաղաքականությունը զուրկ էր հարուստների, միջին խավի և կարիքավորների շահերի պաշտպանությունն ապահովելու գաղափարախոսությունից, նորմերից և մեխանիզմներից, քանի որ նման բաժանումը խորթ էր այդ հասարակարգին: Սոցիալիստական հասարակարգը, բոլոր թերություններով հանդերձ, իր սոցիալական քաղաքականությունը հիմնում էր համընդհանուր սոցիալական ապահովման և առավելագույն սոցիալական երաշխիքների սկզբունքների վրա: Պետությունն ապահովում էր անվճար կրթություն, բուժում, կացարան, հանգիստ, ծերության կենսաթոշակ, հաշմանդամության թոշակներ, անչափահաս երեխաների նպաստ, իրագործում համընդհանուր զբաղվածության խնդիրը: Սոցիալական քաղաքականության կարևորագույն տարր էր նաև առաջին անհրաժեշտության ապրանքների դոտացիան և սպառողական գների կայունությունը, որոնք շատ ապրանքների համար անփոփոխ էին մնում տասնամյակների ընթացքում: Սոցիալիզմի իրական նվաճումների թվին կարելի է դասել նաև աշխատանքի և հասարակական ֆոնդերի միջոցով սպառման ու բաշխման հարաբերությունների համակարգի ստեղծումը, որն ապահովում էր աղքատությունից և երաշխավորում բնակչության լայն շերտերի անձնական սպառման բավական բարձր մակարդակ: Ընդգծենք նաև, որ բոլոր թերություններով հանդերձ, արտադրության կառավարման և պլանավորման կենտրոնացված մեթոդների շնորհիվ ստեղծվել էին պայմաններ, որոնք թույլ էին տալիս տևական ժամանակամիջոցում խոշոր բյուջետային հատկացումներ իրականացնել սոցիալական ոլորտի զարգացման համար:

ԽՍՀՄ փլուզումից հետո անցման շրջանի դժվարությունների բնական հետևանքները, խիստ սահմանափակեցին հանրապետության տնտեսական զարգացման հնարավորությունները և բացասաբար անդրադարձան բնակչության սոցիալական վիճակի վրա: Ակնհայտ դարձավ, որ.

1. Կրթության, գիտության և մշակույթի, ինչպես նաև բնակչության անապահով խավերի նկատմամբ հավասարաչափ պետական աջակցության քաղաքականությունը, ըստ էության չլուծելով ոչ մի սոցիալական խնդիր, փոշիացնում էր բյուջետային սուղ միջոցները:

2. Ցածր միջին աշխատավարձի պայմաններում քաղաքացիները չէին կարող լուրջ հատկացումներ կատարել սոցիալական ապահովագրության ֆոնդերին: Նույնը վերաբերում էր գործատուների հնարավորություններին: Այս փաստը քիչ հավանական էր դարձնում գործազրկության, հիվանդությունների ապահովագրման գործուն համակարգի կազմակերպումը և արդյունավետ կենսաթոշակային ֆոնդերի ստեղծումը:

3. Սոցիալական դրությունը բարդացնում էր նաև պատերազմի հետևանքները:

4. Սոցիալական լարվածության տեսակետից դրությունը բարդացնում էր այն, որ պետությունը շարունակում էր սոցիալական դաշտում գլխավոր «գործող անձի» իր դերը, իսկ բնակչությունն

առաջվա նման պետությունից սպասում էր համընդհանուր պարտականությունների կատարում, որն իրական չէր:

**5.** Արդյունավետ սոցիալական քաղաքականություն իրականացնելու տնտեսական հնարավորությունների կտրուկ անկումը տեղի էր ունենում այն պայմաններում, երբ սոցիալական աջակցության կարիք ուներ բնակչության ճնշող մեծամասնությունը:

**6.** Մասնավոր հատվածում աշխատանքային հարաբերությունները դեռևս կանոնակարգված չէին, իսկ արհմիություններն անգործության էին մատնվել: Տեղի էր ունեցել մարդկային կապիտալի փոշիացում և լրջորեն վտանգվել էր միջին խավը՝ ժողովրդավարության ու քաղաքացիական հասարակության և կայուն զարգացման խթանիչ ուժը:

Վերոնշյալը պահանջում էր բնակչության սոցիալական ապահովության նոր կառուցակարգերի ստեղծում, ոլորտը կանոնակարգող բազմաթիվ իրավական ակտերի, սոցիալական աշխատողների պատրաստման և վերապատրաստման ծրագրերի առկայություն, ոլորտի կառավարման համակարգի որոշակի տեխնիկական զինում և, իհարկե, ոլորտի բարեփոխումներին ուղղված բազմաթիվ ծրագրերի առկայություն: Այդ ամենը հաշվի առնելով ԱՀ պետական կառավարման մարմինները սկսեցին մշակել և իրականացնել մի շարք սոցիալական ծրագրեր, որոնք ուղղվեցին բացասական զարգացումների կանխմանը: Այդ ծրագրերը կարևորվում են բնակչությանը սոցիալական աջակցություն տրամադրելու և եկամուտների անհավասարությունը մեղմելու հարցում: Ավելին, սոցիալական պաշտպանության քաղաքականության հիմնական նպատակը պետք է դառնա պետության կողմից հասարակության ամենալայն շրջանների կենսապայմանների բարելավումը, սոցիալական ռիսկերի կառավարումը, նվազեցումը և կանխարգելումը:

ԱՀ-ում սոցիալական պաշտպանությունը իրականացվում է աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության կողմից, որը պատասխանատվություն է կրում աշխատանքի և սոցիալական պաշտպանության համակարգի բոլոր ճյուղերի (բացի առողջապահության) քաղաքականության մշակման և իրականացման համար: Այդ համակարգի հիման վրա պետությունը բնակչության խոցելի խմբերին առաջարկում է համապատասխան ծրագրեր, ներառյալ. պետական սոցիալական աջակցության, սոցիալական ապահովության, սոցիալական պաշտպանության, պետական սոցիալական ապահովագրության, զբաղվածության ծրագրերը: ԱՀ պետությունն ունի սոցիալական ուղղվածություն: Այդ մասին փաստում են նաև վիճակագրական վերլուծությունները: Այսպես, երկրում 2017թ. սոցիալական պաշտպանության ընդհանուր պետական ծախսերը կազմել են ընդհանուր պետական ծախսերի 22,4%-ը: Ի դեպ 2010-2017թթ. ընթացքում այս ցուցանիշը ցուցաբերել է նվազեցման միտում՝ 2,2%-ով<sup>1</sup>:

Սոցիալական պաշտպանության ծախսերի հսկայական մասնաբաժինը հատկացվում է սոցիալական և ապահովագրական (աշխատանքային, կենսաթոշակային և այլն) նպաստների ֆինանսավորմանը: Պետք է նշել, որ ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ԱՀ-ում նպաստներն ու կենսաթոշակները էական գործոն են հանդիսանում բնակչության դրամական եկամուտների կազմում: ԱՀ ընդհանուր ընտանիքների կազմում նպաստառու ընտանիքները 2007թ.-ին կազմել են 16.24%, իսկ արդեն 2016թ.-ին այդ թիվը մոտեցել է 11.77%-ի, այսինքն՝ ունենք նպաստառու ընտանիքների թվի մոտ 5 տոկոսանոց աճ: 2018թ. հունվարի 1-ի դրությամբ ամսական նպաստի միջին չափը կազմել է 23246 դրամ՝ նախորդ տարվա հունվարի 1-ի 22790 դրամի դիմաց: Մյուս խնդիրը կապված է կենսաթոշակների հետ, որը գրեթե միշտ դիտարկվում է նպաստների հետ նույն հարթության վրա: Հանրապետությունում 2015թ. տարեվերջին կենսաթոշակառուների թվաքանակը կազմել է 31004 մարդ, որոնցից աշխատանքային և սոցիալական կենսաթոշակառուների թվաքանակը՝ 23226, զինծառայության հետ կապված կենսաթոշակառուների թվաքանակը՝ 7778 մարդ: 2017թ. կենսաթոշակառուներին նշանակված կենսաթոշակի միջին չափը կազմել է 42939 դրամ, որը 2010թ. համեմատությամբ աճել է 32,6%-ով<sup>2</sup>:

Տարիքային աշխատանքային կենսաթոշակի միջին չափը 2015 թվականի արդյունքներով կազմել է 45200 դրամ՝ 2014 թվականի 40000 դրամի դիմաց՝ ավելացել է մոտ 13%-ով, իսկ

<sup>1</sup> Հաշվարկները կատարվել են ԱՀ ԱՎԾ պաշտոնական տվյալների հիման վրա:

<sup>2</sup> <http://stat-nkr.am/> ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 2009-2015 թթ.

սոցիալական կենսաթոշակի միջին չափը 2015 թվականի արդյունքներով կազմել է 19960 դրամ՝ 2014 թվականի 18000 դրամի դիմաց՝ ավելացել է մոտ 10 %-ով:

Երկրում ծնելիությունը և բազմազավակությունը խթանելու, ժողովրդագրական իրավիճակը, աճող սերնդի նյութական ապահովությունը բարելավելու և բազմազավակ ընտանիքների բարեկեցությունը բարձրացնելու նպատակով, ԼՂՀ կառավարությունը 2009թ. հունվարի 20-ի N 15 որոշմամբ էականորեն բարելավվել է դեռևս 2000թ. մեկնարկված նպատակային ծրագրի դրույթները, այսպես. որոշման համաձայն՝ պետական բյուջեի միջոցների հաշվին.

- առանձին խմբերի քաղաքացիներին տրվում են պետական նպաստներ, որոնք հաշվառվում են պետական նպաստի բազային չափի և նպաստառուի բնակության վայրով ու վերջինիս կարգավիճակով պայմանավորված՝ գործակից արտադրյալով,

- երեխայի ծննդյան դեպքում ծնողին տրվում է ծննդյան միանվագ նպաստ, որը հաշվառվում է ծննդյան նպաստի բազային չափի (100.0 հազ.դրամ) և ծնված երեխայի հաջորդականությամբ պայմանավորված՝ գործակից արտադրյալով,

- ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան դեպքում երեխայի անվամբ բանկային կամ ֆինանսական այլ հաստատությունում բացվում է ժամկետային ավանդ,

- վեց և ավելի անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքին հատկացվում է բնակելի տուն:

Նշենք նաև, որ 2007թ. դեկտեմբերի 25-ի N 722 որոշմամբ չաշխատող մայրերին ևս տրամադրվում է նպաստ՝ նվազագույն աշխատավարձի 4,6-ապատիկի չափով:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հանրապետությունում սոցիալական պաշտպանության համակարգի կայացման առումով շատ մտահոգիչ է դրա ֆինանսավորման կայունության խնդիրը: Մինչդեռ աշխարհի զարգացած երկրներում դիտվում է պետության կողմից սոցիալական ծառայությունների շուկայում մենաշնորհային դերից հրաժարվելու միտում՝ խրախուսելով սոցիալական պաշտպանության մյուս սուբյեկտների, հատկապես՝ մասնավոր, հասարակական հատվածների, ինչպես նաև ՏԻՄ-երի մասնակցությունը:

Այդ առումով, հարկ է ընդգծել, որ հանրապետությունում սոցիալական օգնության համակարգը նաև խնամակալության, փոխօգնության ինստիտուտ է՝ այստեղից բխող պետական ուղղակի կառավարման յուրահատկություններով: Դրանցից մեկը մարդասիրական օգնությունն է: 2016-2017թթ. ԱՀ ներմուծված մարդասիրական օգնության ծավալներն ըստ երկրների տրված է աղյուսակ 1-ում<sup>1</sup>.

**Աղյուսակ 1. 2016-2017թթ. ԱՀ ներմուծված մարդասիրական օգնության ծավալներն ըստ երկրների**

	Արժեքը. հազ. դրամ		Տեսակարար կշիռը. %	
	2016թ. հունվար դեկտեմբեր	2017թ. հունվար դեկտեմբեր	2016թ. հունվար դեկտեմբեր	2017թ. հունվար դեկտեմբեր
Ընդամենը այդ թվում՝	493441.4	194688.2	100.0	100.0
ՌԴ	258132.6	83501.1	52.3	42.9
ՀՀ	144834.8	65747.8	29.4	33.8
Գերմանիա	7586.7	17031.4	1.5	8.7
ԱՄԷ	-	16853.7	-	8.7
Ֆրանսիա	-	5596.8	-	2.9
ԱՄՆ	77558.8	4137.6	15.7	2.1

<sup>1</sup> ԱՀ Աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն:

Չինաստան	-	1819.8		0.9
Շվեյցարիա	4008.7	-	0.8	-
Նիդերլանդներ	1319.8	-	0.3	-

Աղյուսակի տվյալներից տեսանելի է, որ հանրապետություն մարդասիրական օգնություն ներմուծող հիմնական երկրներն են ՀՀ-ն և Ռուսաստանի Դաշնությունը:

Սոցիալական օգնության դրսևորման ևս մի ձև է բարեգործական գործունեությունը: 1998թ. սկզբին ՀՀ-ում կար մոտ 30 կազմակերպություն, որոնք զբաղվում էին բարեգործությամբ, որոնք իրենց գործունեությունն էին ծավալում նաև Արցախի Հանրապետությունում: Հետպատերազմյան շրջանում և հատկապես վերջին տարիներին բարեգործությունը նոր թափ է ստացել Արցախում, ինչը ողջունելի է և արժանի համապատասխան գնահատանքի: Կարևորելով բարեգործության դերը ավերածություններից վերականգնվող մեր հանրապետությունում, ԱՀ իշխանությունները որդեգրել են բարեգործության իրականացման ընթացքում ծագող հարաբերությունները կարգավորելու, ինչպես նաև պետության կողմից բարեգործությանն աջակցելու ձևերը օրենսդրորեն կարգավորելու նպատակով ակտիվ քաղաքականություն իրականացնելու սկզբունք: Այսպես, երկրում բարեգործական բնագավառի համակարգման և բարեգործության կարգավորման իրավական հիմքերը սահմանելու անհրաժեշտությունից ելնելով էլ 2007թվականի հուլիսի 21-ին ընդունվեց «Բարեգործության մասին» ԱՀ օրենքը: Բարեգործական բոլոր աշխատանքների համակարգումը առավել հստակ, թափանցիկ և նպատակաուղղված դարձնելու նպատակով յուրաքանչյուր տարվա արդյունքներով ԱՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը հանդես է գալիս հաշվետվությամբ: Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում համագործակցում է ինչպես ԱՀ պետական մարմինների, այնպես էլ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի և տարբեր պետություններում ԱՀ մշտական ներկայացուցչությունների հետ:

Ծրագրերի շրջանակներում բարեգործներին ցուցաբերվում է խորհրդատվական և գործնական օգնություն: Ընդ որում, նախարարության համապատասխան ստորաբաժանման միջոցով բարերարներին և բարեգործական կազմակերպություններին ներկայացնելու նպատակով 2008թ. առաջին անգամ մշակվել է սոցիալական ոլորտի եռալեզու 11 բարեգործական ծրագիր:

Հանրապետությունում 2014թ. օգոստոսի 5-ին ընդունվել է նաև «Սոցիալական պաշտպանության ոլորտում պետության-մասնավոր հատվածների համագործակցության» հայեցակարգը (ՊՄԳ), որի հիմնական նպատակն է ԱՀ-ում համատեղ ուժերով օժանդակել բնակչությանը և բարձրացնել տվյալ ոլորտում պետության գործունեության որակը: Արդյունքում վերջին տարիներին հայտնվել են բազմաթիվ ոչ պետական կազմակերպություններ, որոնց համար բարեգործությունը դարձել է գործունեության ամենազիջավոր տեսակներից մեկը: Որպես նման գործունեության օրինակ կարելի է նշել չունևորների համար անվճար բուժսպասարկման և դեղորայքի, բազմազավակ և ոչ լրիվ ընտանիքների երեխաների համար անվճար հանգստի ապահովումը: Հայկական մի քանի ավանդական բարեգործական հիմնադրամներ իրականացնում են բարեգործություն, որը բխում է այդ հիմնադրամների ընդհանուր ռազմավարությունից և ծրագրերից (օրինակ Հայ օգնության հիմնադրամը):<sup>1</sup>

Սակայն չնայած վերոնշյալ ձեռքբերումներին, դեռ շատ անելիքներ կան: Այսպես, երկրում բնակչությանը տրամադրվող ընդհանուր մասնագիտական ծառայությունների մեծ մասը Աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության գործառույթն է:

2018թ. հունվարի 1-ի դրությամբ Հանրապետությունում իրականացված բարեգործական ծրագրերը տրվում են աղյուսակ 2-ում.

<sup>1</sup> ԱՀ Աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն:

**Աղյուսակ 2. Բարեգործական ծրագրեր**

**Կազմակերպության /ֆիզիկական անձի/ անվանումը**

**Միջոցառումները**

Հայաստան համահայկական հիմնադրամ

Ստեփանակերտ քաղաքի ուռուցքաբանական կենտրոնի շենքի կառուցում և կահավորում:

Վարդենիս-Մարտակերտ ավտոմայրուղու տարբեր հատվածների շինարարական աշխատանքների կազմակերպում:

Ազատամարտիկների փողոցում ֆուտբոլային մարզադաշտի կառուցում:

ՀՕՄ Արցախի միավոր հասարակական կազմակերպություն  
Հայկական բարեգործական ընդհանուր միություն

<<Սոսե>> մանկապարտեզի նոր շենքի կառուցում:

<<Թումո>> ստեղծարար տեխնոլոգիական կենտրոնի բացում:

<<Արցախի Ազատամարտիկների միություն >> հասարակական կազմակերպություն  
Տաոյանա Օգանեսյան/ Ռ.Դ. ք. Մոսկվա/

Ազատամարտիկների անվան զբոսայգու կառուցում:

Բժշկական սարքերի և սարքավորումների տրամադրում:

Փրանսիայի <<Հայ-մեդ>> մարդասիրական ասոցացիա  
<<Դիակոնիա>> բարեգործական հիմնադրամ

Բժշկական սարքերի և սարքավորումների տրամադրում:

Մենդամթերքներով փաթեթների տրամադրում սոցիալապես անապահով ընտանիքներին:

<<Հույսի պատկեր>> հասարակական կազմակերպություն

Մենդամթերքներով փաթեթների տրամադրում, սոցիալապես անապահով ընտանիքներին:

Վիտալի Գրիգորյանց / Ռ.Դ. ք. Մոսկվա/

Բազմահարկ շենքի կառուցում՝ սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրելու համար:

<<Տաշիր>> բարեգործական հիմնադրամ

Ընտանիքներում ծնված 4-րդ երեխայի կապակցությամբ 4-հազարական ԱՄՆ դոլար պարգևավճար:

ք. Ստեփանակերտում <<Հանրապետական բժշկական կենտրոնի>> կառուցում:

<<Թուֆինկյան>> բարեգործական հիմնադրամ

Հաղորդի շրջանի <<Առաջամուղ>> գյուղում բնակելի տների և դպրոցի կառուցում:

Ավագյան Գեորգի / Ռ.Դ. ք. Կրասնոդար/

Մարտունու շրջանի զարգացման ծրագրեր, (հիմնականում Ճարտար քաղաք), ենթակառուցվածքների կառուցում, վերանորոգում (եկեղեցի, մանկապարտեզ, հանդիսությունների տուն և այլն):

<<Հանգանակ>>ՀԿ

Օգնություն միայնակ ծերերին:

<< Կարմիր խաչ>>ՄԿ

Դրամական օգնություն միայնակ կենսաթոշալառուներին:

Միևնույն ժամանակ սոցիալական ծառայություններ մատուցում են նաև առողջապահության, կրթության, գիտության և սպորտի, մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության, գյուղատնտեսության, բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարությունները, արտակարգ իրավիճակների պետական ծառայությունը: Փաստորեն, նշված

գերատեսչությունները և դրանց ենթակայությամբ գործող կառույցները ևս դառնում են սոցիալական պաշտպանության իրականացման պետական հատվածի տարրեր: Ենթահամակարգի մյուս տարրերը սոցիալական ծառայությունների մատուցման տեսանկյունից ունեն ավելի պասիվ դերակատարություն: Բացի այդ, հասարակական սեկտորը դեռևս լիարժեք կարևորված չէ և նրա կողմից մատուցվող ծառայությունների հիմնական մասը կենտրոնացված է քաղաքներում, մինչդեռ մնացած բնակավայրերում ծառայությունների ծածկույթը շատ նոսր է: Թույլ համակարգման պատճառով միննույն տարածաշրջանում կարող են մատուցվել նույնաբովանդակ ծառայություններ՝ առաջացնելով վերածածկեր, այն դեպքում, երբ առանձին տարածաշրջաններ կարող են դուրս մնալ որևէ ծառայությունից /ծրագրից/ օգտվելու հնարավորությունից:

Գիտարկումներից կարելի է փաստել, որ մասնավոր հատվածը լրիվությամբ չի գիտակցում իր դերը բնակչության սոցիալական պաշտպանության ապահովման մեջ: Ավելին, այն ոչ համագործակցային տրամադրվածություն ունի առավել ակտիվ գործող ՀԿ-ների նկատմամբ, քանի որ առաջնորդվում է այն կարծրատիպով, որ ՀԿ-ները զբաղվում են գումարների փոշիացմամբ և կարող են դիմել մասնավոր սեկտորին՝ միայն գումար կորզելու նպատակով: Այս դեպքում բնական է, որ համագործակցության նախաձեռնությունը պատկանում է ՀԿ-ներին, սակայն դա ոչ միշտ է հաջողվում:

Վերոնշյալից ելնելով, կարևորվում են այնպիսի միջոցառումների ձեռնարկումը, որոնք հնարավորություն կտան մասնավոր հատվածին պատկերացում կազմել բնակչության սոցիալական պաշտպանության ապահովման հարցում ՀԿ-ների դերի և նշանակության մասին: Մասնավոր սեկտորի՝ ՀԿ-ների հետ համագործակցության բացակայությանը նպաստում է նաև այն, որ պետությունը մասնավոր հատվածին արտոնություններ չի տրամադրում հասարակական ոլորտում անհատույց ներդրումներ կատարելու դիմաց: Մինչդեռ զարգացած երկրներում մասնավոր սեկտորը սոցիալական պաշտպանության ապահովման կարևոր սուբյեկտներից է:

Հանրապետության բնակչության սոցիալական պաշտպանության գործող համակարգում ՏԻՄ-երը իրականացնում են պետության պատվիրակած ընդամենը մեկ լիազորություն՝ համայնքի տարածքում սոցիալական ծառայությունների տարածքային բաժինների գործունեությունը կազմակերպելը: Սակայն երկրի բնակչության սոցիալական պաշտպանության գործող համակարգում ՏԻՄ-երի կամավոր լիազորությունները մնում են դեռևս չիրագործված՝ վերջիններիս կադրային, նյութական, ֆինանսական համապատասխան ռեսուրսների բացակայության պատճառով: Բնակչության սոցիալական պաշտպանության ապահովման գործում ավանդաբար կարևորվում է նաև ոչ ձևական ցանցի դերը: Այս դեպքում խոսքը համայնքի, ընտանիքի, բարեկամների, ընկերների, հարևանների կողմից ցուցաբերվող օգնության մասին է:

Վերը ասվածից հետևում է, որ ԱՀ սոցիալական պաշտպանության գործող համակարգի ինստիտուցիոնալ ենթահամակարգերի միջև փոխազդեցությունը թույլ է, ինչը վկայում է սոցիալական պաշտպանության գործող համակարգի ամբողջականության խախտման մասին, քանի որ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի ամբողջականությունը պայմանավորված է նաև նրա ենթահամակարգերի միջև առկա փոխազդեցությամբ: